# Վենչուրային կապիտալի ներդրումային ծրագրի II Փաթեթ

**Տեղաբաշխվածությունը:**
Տարածաշրջանային

**Ծրագրի համարը:**
51558

**Գործունեության ոլորտը:**
Տեղեկատվական և կապի տեխնոլոգիաներ

**Ծանուցման ձևը:**
Մասնավոր

**Բնապահպանական կատեգորիան:**
FW

**Խորհրդի՝ նախատեսվող ամսաթիվը:**
27 նոյեմբերի 2019

**Կարգավիճակ:**
**Անցել է վերջնական վերանայումը, առկախված է Խորհրդի հաստատումը**

**Ծրագրի համառոտագրի անգլերեն լեզվով տարածումը:**
25 Հոկտեմբերի 2019

## Ծրագրի նկարագիր

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը, իր Վենչուրային կապիտալի ներդրումային ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում (ՎԿՆԾ II, որը Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի՝ գործող ՎԿՆԾ ծրագրի շարունակությունն է և ներառում է 100 մլն եվրոյի շրջանակ) ներդրումներ է կատարում վաղ և աճի փուլերում գտնվող տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող

կազմակերպություններում բաժնետիրական և հարակից գործիքների միջոցով (ներդրումների ծավալը մինչև 15 մլն եվրո), Բանկի կողմից գործունեություն իրականացվող երկրներում և փորձառու վենչուրային կապիտալի համադրողների հետ համատեղ: Ներդրումների հիմնական թիրախը փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում այն կազմակերպությունների ինովացիայի և բարձր աճի ապահովումն է, որոնք ունեն վենչուրային կապիտալի համայնքի կողմից տրամադրվող միջոցների սահմանափակություն և այս գործիքը ուղղված է շուկայում այդ բացերի լրացմանը: Ներդրումների մակարդակը պահպանելու, ինչպես նաև ընթացիկ ուղենիշի պահանջարկը բավարարելու նպատակով հատկացման համար հայթայթվում են լրացուցիչ միջոցներ Վենչուրային կապիտալի ներդրումային ծրագրի երկրորդ փուլի մնացած մասի համար:

**Ծրագրի նպատակները**

ա) Վենչուրային կապիտալի ներդրումային ծրագիրը հնարավորություն է տալիս Բանկին տարածաշրջանում ակսելերացնելու գիտելիքահեն տնտեսությունը, զարգացնելու տեխնոլոգիական էկոհամակարգերը և աջակցելու իննովացիաներին; բ) Բանկը Վենչուրային կապիտալի ներդրումային ծրագրի միջոցով կարևոր դեր է կատարում տարածաշրջանում լրացնելով վենչուրային կապիտալի ֆինանսավորման բացերն ու կապակցելով այդ բացերը; iii) Վենչուրային կապիտալի ներդրումային ծրագիրը Բանկին հնարավորություն է տալիս պահպանելու բարձր ռիսկ-բարձր հետ վերադարձ հնարավորությունների՝ Բանկի պորտֆելային մոտեցումը:

**Անցումային ազդեցությունը**

Վենչուրային կապիտալի ներդրումային ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում ակնկալվում է աջակցել Մրցակցային և դիմակայուն անցումային որակներին, քանի որ այն աջակցելու է նոր ստեղծված բարձր ինովատիվ տեխնոլոգիաների կազմակերպությունների զարգացմանը, ինչպես նաև խթանելու է վենչուրային կապիտալին առավել դյուրին հասանելիության, որը ՎԶԵԲ տարածաշրջանում մեկնարկային է: Վենչուրային կապիտալի ներդրումային ծրագրի երկրորդ փուլը հիմնված

է առաջին փուլի հաջողության վրա և ՎԶԵԲ տարածաշրջանում գիտելիքահեն տնտեսության զարգացման գործում առանցքային աջակցություն է ապահովում, որը համահունչ է ՎԶԵԲ Գիտելիքահեն Տնտեսության Նախաձեռնությանը, մասնավորապես 3-րդ ուղղությանը՝ փոքր տեխնոլոգիական կազմակերպություններ:

### Հաճախորդի տեղեկատվություն

Յուրաքանչյուր դեպքի համար առանձնահատուկ.

### ՎԶԵԲ ֆինանսավորման համառոտագիր

50,000,000.00 եվրո

### Ծրագրի ընդհանուր արժեքը

50,000,000.00 եվրո

### Բնապահպանական եվ սոցիալական հարցերի համառոտնկարագիր

Գործիքը, որպես այդպիսին, չի դասակարգվում Բանկի՝ 2014թ. բնապահպանական և սոցիալական քաղաքականության ներքո, այնուամենայնիվ, յուրաքանչյուր ենթածրագիր կդասակարգվի յուրաքանչյուր դեպքի համար առանձնահատուկ կերպով և ենթակա կլինի բնապահպանական և սոցիալական պատշաճ ուսումնասիրության և կստացվեն ծրագրին և հաճախորդին հատուկ ուսումնասիրություններ: Ենթածրագրերի դասակարգումների վրա հիմնվելով՝ համապատասխան բնապահպանական և սոցիալական պատշաճ ուսումնասիրությունները կհավաստեն, որ յուրաքանչյուր ենթածրագիր նախատեսված է այնպես, որ համապատասխանի Բանկի Փիարին:

### Տեխնիկական համագործակցություն

Առկա չէ.

### Ընկերության կոնտակտային տեղեկատվություն

Բախրոմ Իբրագիմով
02073386000

## Բիզնես հնարավորություններ

Բիզնես հնարավորությունների կամ գնումների հարցերով կապվել հախաճորդի ընկերության հետ։

Պետական հատվածի ծրագրերի համար այցելել ՎԶԵԲ գնումների բաժին.

Հեռ: +44 20 7338 6794 Email: procurement@ebrd.com

## Ընդհանուր հարցումներ

ՎԶԵԲ ծրագրի՝ գնումների հետ կապ չունեցող հարցումներ.

Հեռ: +44 20 7338 7168

Email: projectenquiries@ebrd.com

## Հանրային տեղեկատվության քաղաքականություն

Հանրային տեղեկատվության քաղաղաքականությունը սահմանում է, թե ինչպես է ՎԶԵԲ-ը տարածում տեղեկատվությունը և խորհրդակցում շահագրգիռ կողմերի հետ՝ ապահովելու առավել լավ իրազեկվածություն և իր ռազմավարությունների, քաղաքականությունների և գործողությունների ընկալում: Խնդրում ենք այցելել Հանրային տեղեկատվություն քաղաքականության էջը ստորև՝ գտնելու ինչպես կարելի է հայցել Հանրային հատվածի խորհրդի զեկույցը:

## Ծրագրի բողոքարկման մեխանիզմ

Ծրագրի բողոքարկման մեխանիզմը ՎԶԵԲ հաշվետվողականության մեխանիզմ է: Այն ապահովում է ՎԶԵԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի վերաբերյալ անհատների և կազմակերպությունների կողմից բողոքների անկախ զննության, որոնք, պատճառել կամ ենթադրվում է, որ կարող են պատճառել բնապահպանական և/կամ սոցիալական վնաս:

Խնդրում ենք այցելել Ծրագրի բողոքարկման մեխանիզմի էջ՝ գտնելու տեղեկատվություն բողոքի ներկայացման վերաբերյալ: Բողոքարկման մեխանիզմի մասնագետը (pcm@ebrd.com) հասանելի է պատասխանելու ցանկացած հարցի, որը կարող է առաջանալ կապված բողոքի ներկայացման հետ կամ գրացման և հասանելիության չափանիշների հետ համաձայն Ծրագրի բողոքարկման մեխանիզմի ընթացակարգերի կանոնների: